

կրեցիք, այլ եւ ընչից, ապրանաց եւ փողոց  
 զրկեցայք վասն սիրոյ սուրբ Երուսաղեմայ.  
 ապա բազում բարեաց եւ պարգեւաց արժա-  
 նաւորեցայք»: Եւ այլ բանս յուրվ խօսի ի 15  
 զըրոց. եւ երկրպագեալ աղօթիւք դառնան յայլ  
 տեղ. եւ այսպէս մինչ իրիկուն շրջին ամենայն  
 ուխտատեղս եւ դնան ի տուն:

Ապա միաբանեալ աղաչեն զառաջնորդն,  
 որ բանալ տայ զՅարութեան դուռն, զի միշտ 20  
 փակման է՝ կպղած եւ մօճրած. բայց միայն  
 ծակ մի կայ թողած, ուստի լուսարարնուն տան  
 կերակուր: Զի ամենայն ազգաց լուսարար կայ  
 անդ. որ ամէն աւիլեն, սրբեն, մաքրեն, կան-  
 թեղս լուցանեն, խունկ ծխեն եւ պատարա- 25  
 դեն: Եւ կայր Հայոց լուսարար մի սուրբ եւ  
 առաքինի, ճգնաւոր եւ պահեցող, որ միայն  
 մորթն մնացեալ ընդ ոսկրաւ եւ ամենայն մար-  
 մինն ցամաքեալ. եւ ասին Քի տարի է քանի  
 որ մտել է Յարութիւնն. վա՛յ ինձ մեղաւո- 30  
 րիս: Եւ Պարոնտէրն առաքէ շխերուն մեծն,  
 զի աւելի քան հազար շէխ կայ Սողոմոնի տա-  
 ճարն: Եւ նա առնու զմօճրն. եւ զատին զբա-  
 նային. եւ դան հետ սուպաշուն եւ պարոնին  
 քեհին. նստին սուրբ Յարութեան դուռն. զայ 35  
 եւ մեր առաջնորդն եւ նստի հաւասար նոցա.  
 զան եւ թարճիմանք. զի ամէն ազգ թարճի-  
 ման մի ունի. բայց մերն զլուիս է: Յայնժամ  
 Խօտապէրտին էր, մեծ եւ անվանի, հռչակեալ

20 տա: — 22 կա: — 24 անգր: — 30 արութիւնն:  
 — 33 նայ: — 35 գա: — 38 այնժամ: